ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ ֆինանսների նախարարության 2017 թվականի դեկտեմբեր ամսվա գործունեության վերաբերյալ (հարկային մարմնի մասով)

<u>Ընթացիկ աշխատանքներ</u>

Նախնական տվյալներով 2017 թվականի ընթացքում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 39730.3 մլն դրամ՝ պլանավորված 37450.0 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 6.1 տոկոսով կամ 2280.3 մլն դրամով, իսկ նախորդ տարվա նույն ցուցանիշը՝ 22.8 տոկոսով կամ 7377.0 մլն դրամով:

Դեկտեմբեր ամսում ԱՀ պետական բյուջե մուտքագրված հարկային եկամուտները և տուրքերը կազմել են 5022.3 մլն դրամ՝ պլանավորված 4895.6 մլն դրամ ցուցանիշը գերազանցելով 2.6 տոկոսով կամ 126.7 մլն դրամով:

Հաշվետու ամսվա ընթացքում հարկային մարմնում գրանցվել (հաշվառվել) է թվով 91 տնտեսավարող սուբյեկտ, լուծարվել՝ 5 տնտեսավարող սուբյեկտ:

Կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կատարվել է 57 ստուգում, որոնց արդյունքում լրացուցիչ հաշվարկվել են շուրջ 51.8 մլն դրամ հարկային և այլ պարտադիր վճարների գծով պարտավորություններ, այդ թվում՝ պետական բյուջեի հետ փոխհարաբերությունների ճշտության 41 ստուգում՝ 44.9 մլն դրամ գումարով:

Հաշվետու ամսում «Հարկերի վճարումից խուսափելու և հարկային իրավախախտումների դեմ պայքարի» հայեցակարգի շրջանակներում շարունակվել են հսկողական միջոցառումները՝ ուղղված հարկ վճարողների կողմից ձեռնարկատիրական գործունեության առարկաների չգրանցման, պակասորդի հայտնաբերման, հսկիչ-դրամարկղային մեքենաների շահագործման կանոնների խախտման, ապօրինի ձեռնարկատիրական գործունեության իրականացման ու վարձու աշխատողների չձևակերպման դեպքերի բացահայտմանը, որոնց արդյունքում արձանագրվել են խախտումների 13 դեպքեր:

Նույն ժամանակահատվածում կատարվել են թվով 107 ուսումնասիրություններ, այդ թվում՝ 63-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների ներդրման անհրաժեշտության, 10-ը

ակցիզային դրոշմանիշների շարժի և դրոշմավորման կանոնների պահպանման, 9-ը՝ հացի արտադրության և իրացման փաստացի գների չափագրման, 7-ը՝ վճարունակության գնահատման, 4-ը՝ հսկիչ-դրամարկղային մեքենաների միջոցով սխալմամբ գրանցված գումարների հիմնավորվածության և 14 այլ ուսումնասիրություններ:

Հաշվետու ամսում ԱՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարան է ներկայացվել 11 վարչական գործ՝ շուրջ 6.2 մլն դրամ գումարով, ավարտվել՝ 59 վարչական գործ, որով բավարարված գումարը կազմել է 107.3 մլն դրամ:

Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով քննված 121 վարչական գործով սահմանվել է շուրջ 2.2 մլն դրամ վարչական տուգանք:

Հաշվետու ամսում հարուցվել է 1 քրեական գործ, որով պետության հասցված վնասը կազմել է 6.3 մլն դրամ:

Հարկ վճարողներին սպասարկող ստորաբաժանումների կողմից ընդունվել և մշակվել է 5752 հաշվարկ-հաշվետվություն, որից էլեկտրոնային եղանակով՝ 4873:

Էլեկտրոնային եղանակով հաշվետվությունների ներկայացման նպատակով հարկ վճարողների հետ կնքվել են թվով 84 պայմանագրեր:

Հիփոթեքային վարկի սպասարկման համար վճարված տոկոսների գումարների չափով վարձու աշխատողների և անհատ ձեռնարկատերերի կողմից վճարված եկամտային հարկի գումարների վերադարձի գործընթացի շրջանակներում կատարվել է վերադարձ 8 վարձու աշխատողի՝ 3 մլն դրամի չափով:

Եռամսյա ժամկետով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով գործունեությունը նոր սկսող 55 հարկ վճարողների տրամադրվել են հավաստագրեր:

Հաշվետու ամսում ԱՀ Ազգային Ժողովի կողմից ընդունվել է հարկային մի շարք օրենքներում փոփոխություններ նախատեսող նախագծերի փաթեթը:

Հաշվետու ամսում ԱՀ կառավարության կողմից հաստատվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2000 թվականի հուլիսի 11-ի N 138 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2013 թվականի սեպտեմբերի 12-ի N 613-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» և «Լեռնային Ղարաբաղի

Հանրապետության կառավարության 2001 թվականի հունիսի 19-ի N 168 որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» որոշումները:

Ֆինանսների նախարարի հրամանով փոփոխություն է կատարվել հարկային մարմնի ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի անհատական կազմում:

Առաջին անգամ Հանրապետությունում 57 հարկ վճարողների շնորհվել է օրինապահ հարկ վճարողի կարգավիճակ և տրամադրվել հավաստագրեր: Օրինապահ հարկ վճարողների ընտրությունը կատարվել է համաձայն հաստատված չափանիշների՝ խոշոր, միջին և փոքր հարկ վճարողների շրջանում ու նպատակ ունի հարկ վճարողների շրջանում ձևավորել և ամրապնդել հարկերի ինքնուրույն հաշվարկման և վճարման մշակույթը:

Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության հարկային մարմինների համագործակցության ծրագրի շրջանակներում հաշվետու ամսվա ընթացքում իրականացվել են անուղղակի հարկերի հաշվանցումների համար հիմք հանդիսացող փաստաթղթերի, տեղեկությունների փոխանակման աշխատանքներ:

<u>Հասարակայնության հետ կապ</u>

2017 թվականի 4-րդ եռամսյակում հարկային մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմակերպվել են 740 տնտեսավարող սուբյեկտների ընդունելություն, որոնց արդյունքում պարզաբանվել են վերջիններիս հուզող հարցերը:

Հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքի միջոցով շարունակվել են հանրային իրազեկման աշխատանքները:

Հաշվետու ժամանակահատվածում հարկային մարմին է մուտքագրվել 644, ելքագրվել՝ 303 նամակ-գրություն, որոնք ընթացքավորվել են ըստ գործող կարգի, այդ թվում՝ հարկային օրենսդրական դրույթների պարզաբանման նպատակով ներկայացվել է 6 գրություն: